



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

— ❦ —
ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԴ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884




Կ. ՊՕԼԵՍ

—
1884

ԴԻԻԱՆՔ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Տիգրան	Էֆէնտի	ԵՆԼՈՒՔԵԱՆ	Ա. Արեւոյէր
Քրիստոստուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յակոբ	»	Պօշնակեան	Ա. Արեւոյէր
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
			Գ. »



Ձեռնաստութեան Դիւան

Մատթէոս Եսկ. Իզմիրլեան Արեւոյէր
Գարեգին Վրդ. Թաթարեան
Մարկոս Էֆէնտի Ազարեգեանց

Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արեւոյէր
Գէորգ » Ապտուլլահ
Միքայէլ » Մամիկոնեան

Կալուածոց Դիւան

Քրիստոս Էֆ. Ղազարոսեան Արեւոյէր
Յակոբ » Եէմէնիճեան
Պօղոս » Թորգոմեան

Համարալալութեան Դիւան

Կարապետ Էֆ. Սըվաճեան Արեւոյէր
Մկրտիչ » Ճանըմեան
Գառնիկ » Յովակիմեան

Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւոյէր
Ռուբէն » Պուլկուրեան
Վիչէն » Օրմանեան

Իրաւաստութեան Դիւան

Գարբրիէլ Էֆ. Նորատուկեան Արեւոյէր
Յովհաննէս ՔՏԵՄ. Մկրեան
Յակոբ Էֆէնտի Արշակ

Նախաճեռութեան Դիւան

Մինաս Էֆէնտի Չերաղ Արեւոյէր
Յովհաննէս » Արշակունի
Նշան » Պօյաճեան

Խմբագրութեան Դիւան

Կարապետ Էֆ. Իւթիւճեան Արեւոյէր
Հարարձում » Ալաճաճեան
Յակոբ » Գուրգէն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԴ.

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

ՆԻՍՏ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԳՈՒՄԱՐԵԱԼ Ի ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՋ

ԱՏԵՆԱՊԵՏ — ՏԻԳՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԵՈՒՍՈՒՖԵՆՆ

Ըստ հրաւիրանաց Ատենապետ Էֆէնտիի, Ազգային Երեսփոխանական ժողովն յարտասովոր նիստ գումարեցաւ այսօր 'ի Մայր Եկեղեցոջ Կ. Պօլսոյ, Օրակարգ ունենալով մի միայն՝

ՄԱՀԱԳՈՅԺ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻԻ Կ ՊՕԼՍՈՅ

Ատենն բացուեցաւ ժամը 4 1/2 ին 'ի ներկայութեան 82 Երեսփոխանաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս արտասովոր նստին ատենը բացած պահուս, սարսուռ մը կ'ըզամ, յիշելով թէ, մինչդեռ ժողովոյս օրինական վերջին նստին մէջ համայնիցս սիրեցեալ մեր պատուական Նախագահին հրաժարագիրը կը հաղորդէի, նա դադարած է եղեր ապրելէ : Եւ

ես կը պարտաւորիմ այսօր մահաբեր դուժկան հանդիսանալ, սոյն արևտալի պատահարը Ձեզ, Մեծարոյ պաշտօնակցացս հաղորդելու, թէ այլ եւս չ'աղբիւր ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ, այն ԱԶԳԱՍԷՐ Պատրիարքն՝ որ իւր կենաց խիստ կարճատեւ ընթացքին մէջ, այնչափ սիրելի էր եղած ազգին, պատկառելի օտարաց, և իւր Վեհապետին համակրութիւնը դրաւ : Ոչ միայն իւր հոգեւոյ զուարէնք, Հայոց Ազգն, այլ մինչեւ իսկ օտարներն՝ որք առանց զինքը անձամբ ճանչնալու համակրած էին նորա առաքինութեանցը վրայ սքանչանալով, վըշտակեցան արդէն իւր հիւանդութեան տաժանելի ժամերուն մէջ, Մինչդեռ կուրախանայինք, թէ Աստուած բարեհաճեցաւ ըսել Ազգին հանրական մաղթանաց ձայնն, և թոյլ տուաւ ապրիլ ակոտայելոյն՝ որ դատապարտեալ էր արդէն բժշկական վճռադրով, ո՞չ, խաբուսիկէ եղեր այդ յոյսն, նման աշխարհ

հային ամենայն յուսոց, և « կորուսինք զինքն՝ ճիշդ այն միջոցին յորում կը յուսայինք թէ պիտի կարենայինք մխթ թարեւ, » ինչպէս կը գօչէր Լուգովիկոս ԺԴ. Ֆենեւրնի մահն իմացած ատեն :

Է՛հ, անողորմ բաղբ, ի՛նչ դառն հարուած է որ կուտայ Աղբին. բաւական չհամարելով Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր-Աթոռոյն թափուր վիճակն, միւս Աթոռոց ցաւալի կացութիւնն, անգըծաբար կը հարուածէ նաեւ Կ. Պօլսոյ Պատրիարքական Աթոռն, և Կը յափշտակէ այնպիսի Դեռտ մը, որ ո՛չ միայն իւր վիճակայնոց՝ այլ ի սփիւռ աշխարհի տարածեալ ամենայն Հայոց սիրտը կը խոցէ, Արդէն հետզհետէ կը համնին ի Պատրիարքարան մեր դաւառացի և տարաբնակ ազգայնոց վշտակցական հեռագրերէն. էջմիածնայ Ս. Սինհօզն Կրօնական Ժողովոյ, և Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսն ինչպէս նաեւ Մոսկուայի աղիւռուսանոգը ուղղակի Ազգային Ժողովոյս կը դիմեն իրենց արցունքն մեր արտասուլուաց հետ խառնելու :

Եւ ոչ միայն Աղբը կուլայ այս մեծ կորստեան վրայ, այլ եւ մեր տարակրօն համազդիքն, ինչպէս նաեւ օտարազգի հասարակութիւնք արտասովոր համակըրական ցոյցերով կուգան մասնակցել իրենց հայրենակցաց այս դառն սգոյն, յանհունս երախտապարտ կացուցանելով իրենց՝ Աղբն ողջոյն :

Արդէն խիտ ճարկար դրիչներ, թէ՛ ազգային և թէ՛ օտարազգի մամլոյ միջոցաւ, և պերճախօս Ատենարան մը Եկեղեցւոյ Ս. Բեմէն դրուատեցին երջանկայնչատակ Հայրապետին կեանքը, ինձ անկէ միայն այժմ, մեծարոյ Պաշտօնա-

կիցք, Ազգային Ժողովոյս դառնակսկիծ զգացմանց թարգման հանդիսանալ ի պաշտօնէ : Եւ այս պարտականութիւնը կատարած պահուս՝ բոլոր անոնք, որք անտիական հասակէ հոգեւոյս Հանգուցելոյն դասակից, և կամ իւր ազգոգուտ ձեռնարկութեանց աշխատակցած լինելով, ինձ նման ՚ի մօտոյ ճանչցած են Նորա անդուդական յատկութիւններն և սրտին լաւագոյն զգացումներն, կը վկայեն թէ ստուգիւ ճշմարտութեան ձայնն էր որ բարձրացաւ աստ յ՚Եկեղեցւոյ, իբրեւ արձագանդ այն համաշխարհական կովծանադ, որ իւր ետեւէն կը թողու այսպիսի տարածամ մահուամբ աշխարհէս հրաժարող մեր տարբազղ անձնուէր նախադահն :

Այն անձնաւորութեանց միոյն չունչն էր սպառեալն՝ որք ապագային հայեացքէն առանց վախճանը կրնան հանդուր թեւ, զի ապահով են թէ պարտականութիւննին կատարած են և ահա այն պատճառաւ բարոյապէս մեծ մարդկանց շարքին մէջ կը դասուին :

« Բարոյական մեծութիւնն՝ հասարակաց հիացումն լինքն կը դրուէ, մանաւանդ երբ նա՝ ամենայն չահագէտ ակնկալութիւններէ մեկուսացեալ՝ յաւիտենական սեմին վրայ պարզ երեսով մը կը ներկայանայ : Կականածին կը պատկառին անկէ անոնք անգամ՝ որք ընաւ արժանաւորութիւն չունին զայն հաօլընալու և անոր նմանելու : »

Սուանց իւր կենսագրութիւնն ընելու՝ թողումք անհատական կեանքն և փոքրիկ անկնարկ մը նետեմք իւր հրապարակային կենաց վրայ :

Յառաջադիմական փիլիսոփայու-
թեան դազափարաց 'ի բնէ հակամէտ' և
Աւետարանի լուսովը լուսաւորեալ, Քր-
րիստոսի այս պաշտօնեայն, կատարեալ
'ի պարտաճանաչութեան, իւր շրջանակին
մէջ գտնուող ժողովրդեան, սոյն օրինակ
զգացմանց արժանաւոր ներկայացուցիչ
հանդիսացաւ, և աշխատեցաւ առաջ-
նորդել զնոսա 'ի ճանապարհ արդարու-
թեան և օրինաւորութեան, և հսկել որ
ընաւ չ'չեղին:

Իւր սկզբունքն էր գործունէու-
թեամբ՝ բայց միանշամայն ամենայն
համեստութեամբ տարածել բարոյակա-
նի այս վեճ՝ դազափարը:

1860ի Ազգային դազափարաց բա-
րեշքումէ առաջ և ետքը, իւր անհա-
տական և պաշտօնական կենաց մէջ կա-
տարած դերը, փառաւոր վկայական մ'է
իւր ձեռքն՝ պատմութեան առջեւ ճա-
կատարաց ներկայանալու:

Սահմանադրութեան հաստատու-
թեան գործունեայ անդամոց մին, և
ապա նորա պահպանութեան հզոր խոյ-
եանն եղաւ, առանց ուրանալու վերա-
քննութեան պէտքը:

Ժամանակին պահանջմանց համեմատ,
եկեղեցական և աշխարհական վարչու-
թեանց բարենորդման պիտոյից 'ի վա-
ղուց համոզուած, սակայն, ինչպէս շատ
պարագայից մէջ, յայտ՝ մասին եւս բո-
լորովին համակարծիք էր Ֆիննլանդի թէ՛
« ամենայն բարեփոխութիւնք պէտք էին
իրենց բնական իշխանութեան նախաձեռ-
նութեամբ 'ի գործ գրուել », որ ըսել է
կրօնականն՝ Եկեղեցւոյ, և քաղաքայինն՝
Վեհապետին: Ուխտած էր Սահմանա-
դրութեան և Վեհափառ Կայսեր հաւա-

տարիմ մնալու, և չ'դրեց երբէք իւր
ուխան:

Ամենայն բարիք կը խորհէր ազգին
համար. բայց այն հովիւներէն չէր որք
մասնաւորաբար իրենց հօտին բարօրու-
թեանը կը ցանկան և հոգ չեն ընէր ի-
րենց դրացեաց պատահած փորձանաց:
Ուլ իւր սէրն ու գութն ընդհանրական
էր. ամեն մարդ անխտիր կրնար բաժին
ստանալ իւր ձեռամբ մատակարարեալ
արդարութենէն:

Հաւատարիմ իւր կրօնին, Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ այն պատուական
Եպիսկոպոսներէն մին էր, որք զխան
ամեն պարագայի մէջ փորձով ցոյց տալ
թէ յառաջ քան Քրիստոնեայ լինելոյ,
մարդ ծնած են, հետեւապէս պարտա-
կան՝ մատակարարել անխտիր, մարդկա-
յին ազգի պահպանութեան և յառաջա-
դիմութեանը մասին, հարկ եղած նիւ-
թական կամ բարոյական նպաստն ու
պաշտպանութիւնը:

« Համարաբառ Աւետարանի » անուն
երկասիրութեանը մէջ, ամենապարզ ե-
ղանակաւ տուած մէկ բացատրութիւնը,
կատարեալ նկարագրին է իւր փիլիսո-
փայութեան:

« Ծառին ոստերն ո՛րչափ որ իրար-
« մէ հեռացած երեւին, իրարմէ զատ-
« ուած չեն, վասն զի միեւնոյն արմա-
« տէն բուսած են:

« Քէն, վրէժ, ատելութիւն, ան-
« կատար մարդոց գործքեր են. արդա-
« հատութիւն, կարեկցութիւն, սէր,
« Աստուծոյ և կատարեալ մարդու գոր-
« ծեր են:

« Մարդկային ընկերութեան մէջ,
« սէրը թագաւորեցնելու համար կարե-

« ի եղածին չափ ներողամտութիւն և « գլխութիւն պէտք է ունենամք իրարու « նկատմամբ : »

Ո՞վ կընայ ըսել թէ իւր յարաբե-
րութեանց մէջ վարմունքն չէին համա-
պատասխաններ քարոզած սոյն սկզբանց :
Միշտ պատրաստ էր ներելու ամենայն
յանցաւորաց , իսկ պատժելէ կարծես
թէ կը խորչէր :

Արտաքին յարաբերութեանց նկատ-
մամբ իւր համոզումն էր , հետեւել այն
բաղմուղարեան ազգային քաղաքականու-
թեան , որ է անվթար պահպանել Պա-
թիս Սուլթան Մէհմէտի հաստատած
Պատրիարքական Աթուոյն իրաւունքն և
արտօնութիւնքն . վասն զի Օսմանեան
մեծազօր դահուն հովանոցն ներքեւ
միշտ դռած է Հայն իւր Եկեղեցւոյն և
Ազգին անեղծ պահպանութիւնն :

Ահա այս պատճառաւ սիրելի էր եւ
դած մեր Օգոստոսիառ Կայսեր , — որոյ
հովանին Աստուած անպակաս ընէ մեր
ամենուս վրայէն , — և զանազան պա-
րագայներու մէջ իւր հաւատարմութիւնը
փորձով ցոյց տուած էր Ն . Կ . Վեհափա-
ռութեան : Ուստի Պետութեան ղեկն ա-
ռուջնորդող բոլոր իմաստուն խորհրդա-
կանք ՚ի վաղուց զայն գնահատած էին ,
և իրենց համակրութեամբն ու վստա-
հութեամբը պատուած :

Քանի որ Կառավարութեան վստա-
հութիւնն իւր վրայ կաւելնար , ազգա-
սիրութեան ոգին ալ այնչափ կը բարձ-
րանար , որով կը ջանար ասպայուցանել
թէ՛ ազգին շահերն անբաժան են Օս-
մանեան Պետութեան շահերէն :

Չեմ ուզեր մի առ մի թուել իւր
ըրած ծառայութիւններն , — Միթէ եր-

ջանկայիշատակ Հայրապետն չէ՞ր որ ծա-
ւալեց այն դաշտափարը թէ , ազգին օգ-
տակար անդամներ , բարի քաղաքացի-
ներ , և միանգամայն Տէրութեան հաւա-
տարիմ հպատակներ հասցնելու համար ,
անհրաժեշտ էր հանրային կրթութեան
ծաւալմանն աշխատիլ : Առ այս ապա-
ցոյց են իւր պաշտօնավարութեան միջո-
ցին հիմնեալ կրթական հաստատութիւնք ,
որք իրենց դոյրութիւնն մեծաւ մասամբ
իւր ինամաց և պաշտպանութեան կը
պարտին և որք իրենց երախտադիտու-
թիւնն ցոյց կուտան այն ծաղկեայ վեր-
ջերով զորս կուգան այսօր սկուել իւր
չիրմին վրայ :

« Պարագայներն չեն որ զմարդիկ
կտակդեն , կըսէ Լամէ , ալ մասնա-
նիշ կընեն այն վե՛տմ հոգիներն , որք
կարծես թէ , ՚ի բնէ սահմանեալ են լը-
ռուեայն չանցնիլ կենաց ճանապարհէն » ,
որոյ ժամացոյցին վայրկեաններն դարե-
րը կը ներկայացնեն :

Այո , հաղուազիւտ են այն մեծ հո-
գիներն , զորս Աստուածային շունչն վեր-
չած վայրկեանին մասնաւոր յատկու-
թիւններով կօծոյն . պաշտօն կուտայ
նոցա զանազան ժամանակներու մէջ ,
մարդկային ազգի ընդհանրութեան կամ
նորա մասնական բաժանմանց միոյն մէջ ,
զարգացման սանդուղին վրայ մի կամ
աւելի քայլեր առնել տալ դէպ յառաջ :

Այն հաղուազիւտ անձնաւորու-
թեանց մին էր Նե՛րՍի՛Ս , որոյ կեանքն ,
անձնուրացութեան , անշահասիրութեան
և հայրենասիրութեան տիեզերահռչակ
օրինակներ եղած են :

Նախնեաց առաքինութիւնք , Սա-
հակայ , Մեսրոպայ և մասնաւոր իւր

անուանակցայ երանանորհ Ներսէանե-
րու առաքինութիւններն ու բարքը ,
դարուս ոգւոյն ընթերակցեալ կը պատ-
կերանային իւր վրայ, որով սիրելի կ'ը-
լար յաչս Աղղին և մեծարելի օտարաց :
Կարծես Պոսիւէի, Ֆենելոնի և Մասելիօնի
ոգիներն էին 'ի նմա ցուցեալ , երբ իւր
քաղցր ձայնովն վեհութեամբ կը քարո-
զէր եկեղեցւոյ բեմէն , կամ ժողովոյս
մէջ կը խօսէր իւր Նախագահական ա-
թոռէն :

Ահա սոյն չնաշխարհիկ յատկութիւն-
ներն էին որք մղեցին զինքն 'ի դահակա-
լութիւն Արարատեան Մայր—Աթոռոյ ,
հանրական բաղձանաց այնպիսի միաձայն
յայտարարութեամբ , որ հին և նոր աշ-
խարհի բոլոր ընտրողական մարմիններն
և ընտրելիներն զարմացուց :

Այս այն հազուագիւտ մարդկանց
մին էր, զորս փառքը երբէք չի շլայներ ,
և երբ համոզուած են թէ այլ եւս չի
պիտի կարենան ծառայել , յօժարակամ
կիջնան այն Աթոռէն , ո'ւր կը գտնուին ,
կամ կը մերժեն այն աթոռը՝ որչափ բար-
ձրը ալ եղած ըլլայ այն :

Ի վաղուց հասկցած էր իւր տաժա-
նելի հիւանդութեան դառն հետեւան-
քըն , և անայլայելի արիւթեամբ պատ-
րաստուած էր հանդերձեալ կենաց : Զար-
հուրելի էին կրած տառապանքն , երբ
ախտն սկսաւ խօտիւ կատարել իւր ըն-
թացքն այնպիսի կորովի մարմնոյ մը վը-
րայ : Քսան աւուրց չափ շնչարեկութիւ-
նը զինքը սաստկապէս կը տանջէր , գիշեր-
ները անքուն հսկելով , Ա.Տ. քիչ մը շունչ
կարենալ առնելու համար ի'նչ ջանքեր
չէր ընէր : Իրեն այնպէս կը թուէր թէ՛
սեննկին մէջ օգ չիկայ , ուստի պա-

տուհաններն բանալով դէպ 'ի դուրս կը
չնչէր , և իւր քով գտնուողներուն ու-
րժշկայ « օ'գ տուէք ինձ , քիչ մը օ'գ »
կաղաղակէր , զերդ Կէթէի հանճարը , որ
իւր օգեւսպառ վայրկեանին « լոյս և քիչ
մ'ալ լոյս » կը գոչէր :

Քիչ ատենէն գերեզմանին խոր ան-
դունդը միայն պիտի ամփոփէ՝ համաշ-
խարհական կալիճ մը թողով՝ այսպիսի
տարածամ՝ մահուամբ աշխարհէս հեռա-
ցող անձնուէր Հայրապետին ցուրտ մար-
մինն : Եկէք ուրեմն , ազնիւ Պաշտօնա-
կիցք , ձեռամբարձ պաշտովմք զհամ-
գիտ հոգւոյ մեր երջանկայիշատակ սի-
րելի Նախագահին , զոր ժողովս արդէն
իւր գերագոյն հեղինակութեամբ Ա.Զ.Գ.Ս-
Սէր ՊՈՏՐԻԱՐՔի տիտղոսովն պատուած
է 'ի կենդանութեան իւրում :

Արդ մաղթելով որ ընդ վնոյթ բա-
րեբաղդութիւն ունենայ Աղգն ՆԵՐՍԷՍԻ
արժանաւոր յաջորդն տեսնել Պատրիար-
քական Աթոռին վրայ , կառաջարկեմ որ
ժողովու բարեհաճի քուէարկել հետեւեալ
բանաձեւն :

« Ի նշան սոցոյ Երջանկայիշատակ
Հայրապետին Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ ԱՐՔԵՊԻՍ-
ԿՈՊՈՍԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ Ա.Զ.Գ.ՍԱՍԻՐ ՊՍՏ-
ՐԻԱՐՔԻՆ Կ. ՊՐԵՍՅՅ , Աղղային ժողովն
կորոչէ՛ դադրեցնել իւր նիստերն մինչեւ
մէկ ամիս ,

« Եւ կը յանձնարարէ Մայր-Գիւա-
նին որ Ատնապետաց Գիւանին հետ միա-
նալով , Օրակարգի մէջ գտնուած ստի-
պողական խնդիրներն ուսումնասիրէ , և
պատրաստուած բերէ ժողովին : Եւ կը
յուսայ թէ սոյն միջոցին Աղղային վար-
չութիւնն եւս , իւր կողմէն Պատրիարքա-
կան ընտրութեան համար հարկ եղած
Նախապարաստական գործադրութեանց
ընդ վնոյթ կը ձեռնարկէ : »

Ժողովը յոտնկայտ ունկնդրելով սոյն ատենարանութեան, միաձայն հաւանութեամբ ԿԸՆԳՈՒՆԻ Ատենապետ Էֆէնտիի առաջարկած բանաձեւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) եւ այժմ, մեծարոյ Պաշտօնակիցք, երթամք ուրեմն խմբովին, 'ի դիմաց ընդհանուր Հայոց Ազգին, մեր հրաժեշտի վերջին ողջոյնը մատուցանել մեր սիրեցեալ Նախադահին ցուրտ դամբանին, եւ ծաղկեայ պսակ մը վետեղել Նորա շիրմին վրայ՝ իբրեւ վերջին առհաւատ չեայ Ազգային սգոյ :

Սոյն առաջարկն եւս միաձայն հաւանութեամբ ԸՆԳՈՒՆՈՒԵԼՈՎ, Ատեանն կը փակուի ժամ 5 :


Եւ ըստ առաջարկութեան Տ. Խորէն Նար-Պէյ Սրբազանի, Երեսիոխանք խմբովին մտան 'ի մեծ Տաճարն, ուր պիտի կատարուեր Ս. Հանդուցելոյն Հոգեհանդստեան արարողութիւնը :

Ատենադպիր

Յ. ՊՕՇՆԱԿԵԱՆ

Ատենապետ

Տ. ԵՈՒՍՈՒՑԵԱՆ



Ն Ի Ս Տ Ժ Դ .

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԹԱՆԲ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԹԱՆԲ

ԵԿԵՆՅԵՍԱՆԲ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բազրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէթեան

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իզմիրեան
- 7 Յովհաննէս Քահ. Միրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 10 Խորէն Քահ. Փէշլիվանեան
- 11 Ոսկի Քահ. Օհանեան
- 12

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ » Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Սըշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան
- 16

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 9 Սուքիաս Քահ. Ստեփանեան
- 0 Գարրիէլ » Խանճեան

Բ. Բացակայութիւն առաջին :
 2 » Երկրորդ :
 4 » բանաւոր պատճառաւ :

ՍՏԻՍՐԱՆՆԵՐ
 Ա. Վիճակ

- Գոմ-Գաբու, Կեդիկ-Փաշա-
Էւ. Գոմ-Գաբուի ղուրս
- 24 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմաճեան Բ Պ
- 23 Բարթող Գիւրքնիպաշեան
- 24 Յ. Մէրեմ-Գուլի
- 25 Տիգրան Հիւնքեարպէյէնտ.
- 26 Աւետիս Սուրէնեան
- 27 Տօբթ. Այվազեան
- 28 Գէորգ Այվազեան
- 29 Յակոբ Եէմէնիճեան
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարական
- 32 Մինրան Ինճէեան
- 33 Մարտիրոս Եքէրճեան
- 34 Մանուէլ Պէշիրեան
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ
 Պէշիկլար

- 38 Բարսեղ Հալաճեան
- 39 Յովհաննէս Քէրէտէճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան
Եհնի-Գաբու.
- 41 Լուսնի Քարամաճեան
- 42 Մարուպէ Յրէնիկեան
- 43 Պօղոս Էնքէրճեան
- 44 Յակոբ Պօշնակեան
- Իւսիլիտար Ս. Խաչ
- 45 Սիմէօն Յէլլկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ

47 Գասպար Գասպարեան
 48

Իւսիլիտար Ս. Կարապետ

- 49 Մինրան Պահճէգափուլ. Բ Պ
- 50 Պօղոս Թորղոմեան
- 51 Տրդատ Փափաղեան
- 52 Յակոբ Հաճեան

Գ. Վիճակ
 Գասարմ-Բաշա

- 53 Գասպար Չերաշ
Բերա
- 54 Գրիգոր Ալէրմիյէճեան
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վիշնէ Օրմանեան
- 59 Սինքերիմ Մանուկեան
- 60 Համբարձում Մաղպուլե.
- 61 Մանուկ Աւրանեան
- 62

Միջագիւղ

- 63 Տիգրան Եւտուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան
- 65 Մկրտիչ Շանրմեան
- 66 Ստեփան Տամատեան
- 67 Պէլգօզ Էւ Ղալաթիա
- 68 Միքայէլ Մամիկոնեան
Դ. Վիճակ
- Քուզկուճուճ Էւ Իճաթլի
- 69 Մկրտիչ Մէղպուրեան
- 70 Սիմօն Մաքսուտեան

Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍՆՔ	Մուշ
71 Գաննիկ Յովակիմեան		121 Ստեփան ֓ափաղեան Բ
72 Կարապետ Հաղարեան	Կարին	Տիվրիկ
Նարյը-Գաբու.	401 Սերյոբէ Աղնաւորեան Բ 3	122 Նշան Գարազաշ
73 Միհրան Տէօբմէ ճեան	Քեօբանեա	Ջէյրուհ Ե. Մարաշ
Եհնի-Մանալիկ Սամարիոյ	402 Աւետիս Թընկերեան	123
74	Աղբիւնուպոլիս	Տրապիզօն
Թօփ-Գափու.	403 Յակոբ Պարոնեան Բ 4	124
75	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. եղիս Ե. Ս.	404 Կարապետ Ս.Իւթիւճեան	125 Կարապետ Սէթեան
Աստուածամից	Ակն	Տիգրանակերտ
76	405 Յակոբ Գորեան	126 Միհրան Չօպանեան
Գուրու-Չեշմէ	Ղարաճիսար	Վազ
77 Կարապետ Սըվաճեան	406 Կարապետ Երէցեան	127 Մարկոս Աղարէգեանց Բ 4
Հիսար Ե. Պօյաճի-Գիւղ	Արաբկիբ	Աղբամար
78	Բաղէշ	128
Նոր-Գիւղ Ե. Սրէնիս	408 Սրբիկար Արքիարեան	Հալէպ Ե. Այնբապ
79	Պրուսա	129
Պալատ	409 Քրիստոստուր Ղազարոսեան Բ 4	Սեբաստիա
80 Մկրտիչ Կիւմրուշեան	Եւդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիբեան
81 Ռէթէոս Թաղէսեան	410 Կարապետ Կիւրճեան	Ռուսճուգ
82 Ներէս Երէցեան	Ամասիա	131
Քարակիտօմիլիկ	411 Համբարձում Ալաճաճեան	Բաբերդ
83 Յովհաննէս Թօրոսեան Բ	Բալու.	132
84 Կարապետ Փանոսեան Բ 2	412 Յովհաննէս Աղնաւորեան Բ 4	Չմշկամագ
Ե. Վիճակ	Եղեպիա	133
Սամարիա	413 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
85 Յակոբ Արշակ	Մանգրլիս	134
86 Սարգիս Աղարէգեան Բ 4	414	Ատանա
87 Յովհաննէս Նուրեան Բ 7	Հաճըն	135 Մինաս Չերազ
88 Ռուբէն Կիւմրուշիլուտան Բ 4	415	Սղերդ
89	Երզնկա	136 Մատթէոս Ալէքսանեան Բ 2
90	416 Ռէթէոս Պէրպէրեան	Եօզատ
91	Թէքիրտաղ	137
92	417 Տիգրան Գ. Սինանեան	Մայաբիա
93	Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան
94	418	Իգմիր
Խասգիւղ	419	139
95 Յովհաննէս Արշակունի Բ 4	Պալըբէսը	Եգիպտոս
96 Ռուբէն Պուկուրեան	Խարբերդ	140 Աբրահամ Մուրատեան
97 Յակոբ Խանտանեան Բ 4	419	
98 Նիկողոս Թուլպէնտճեան	Պալըբէսը	
99 Նշան Փափաղեան	20 Ստեփան Գօլջեան	
400		

ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւ-դէր
2.	»	Սիւնն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իզմիրլեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւ-դէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափազեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքրաս	»	Ստեփաննեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԴԱՄՔ ԲՍՂԱՔՕԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Աղնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվաղեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւ-դէր
3.	Գրըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւ-դէր
5.	Խըարբեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հազարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւ-դէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարաճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմայճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Քիւրքճիխանլեան	Կարապետ	»	

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Մահագոյժ Տ. Տ. Ներսիսի Սրբազան Պատրիարքի Կ. Պօլսոյ .

